ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2021թ. N ---- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած պատերազմական գործողությունների արդյունքում Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած տարածքներում մնացած, ինչպես նաև շահագործման համար ոչ պիտանի դարձած և Երևան համայնքում գրանցված փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություն՝ ազատելով գույքահարկի առկա պարտավորությունների և հաշվարկված տույժի վճարումից մինչև նշված փոխադրամիջոցների խոտանման ամիսը ներառյալ և դրանց մասով փոխադրամիջոցների գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում:

2. Արցախյան պատերազմների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու ժամանակ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին տրամադրել սեփականության իրավունքով պատկանող մեկ փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն՝ ազատելով մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ գույքահարկի առկա պարտավորությունների և հաշվարկված տույժի վճարումից և դրանց մասով փոխադրամիջոցների գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

Փոխադրամիջոցների գույքահարկի արտոնությունները կարգավորվում են ՀՀ հարկային օրենսդրության 245-րդ հոդվածով, համաձայն որի՝ արտոնություն տրամադրվում է որոշակի զինծառայողներին, ինչպես նաև զոհվածների ընտանիքի անդամներին սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցի գույքահարկի մասով: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած պատերազմական գործողությունների արդյունքում զինհաշմանդամների թիվը զգալիորեն աճել է, սակայն սույն օրենքի դրույթներով հաշմանդամություն ունեցող անձանց գույքահարկի արտոնության տրամադրում սահմանված չէ: Պատերազմի մասնակիցները՝ մասնավորապես զինհաշմանդամները, այսօր գտնվում են ծանր հոգեբանական և սոցիալ-տնտեսական կարգավիճակում՝ ֆունկցիոնալությունը վերականգնելու նպատակով վերականգնողական բուժում ստանալու և աշխատելու ունակությունից զրկված լինելով պատճառով: Նշեմ նաև, որ սույն օրենքով փոխադրամիջոցների գույքահարկից ազատվում են պետական սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները՝ այդ ավտոմեքենաների մասով, սակայն նմանատիպ նվիրատվություններ կատարվել են նաև այլ կազմակերպությունների բարեգործական ծրագրերի շրջանակներում (մասնավորապես «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից), որոնք չեն հանդիսանում պետական սոցիալական ապահովության մարմիններ:

2020 թվականի Արցախյան պատերազմի ընթացքում բազմաթիվ անձինք կորցրել են սեփականության իրավունքով իրենց պատկանող տրանսպորտային միջոցները՝ թողնելով թշնամու վերահսկողության տակ անցած տարածքներում, ինչպես նաև ոչնչացված կամ շահագործման համար ոչ պիտանի դարձած լինելու պատճառով: Նշված անձինք փոխադրամիջոց փաստացի չունենալով հանդերձ պարտավոր են վճարել գույքահարկի պարտավորությունները՝ հաշվարկված տույժերով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

2. **Ակնկալվող արդյունքը**

«Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» նախագիծը կնպաստի վերոնշյալ անձանց հոգեբանորեն աջակցմանը և ֆինանսական ծանրաբեռնվածության փոքր-ինչ թեթևացմանը:

Սույն նախագծի ընդունման արդյունքում հնարավոր կլինի տրամադրել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած պատերազմական գործողությունների արդյունքում Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած տարածքներում մնացած, ինչպես նաև շահագործման համար ոչ պիտանի դարձած և Երևան համայնքում գրանցված փոխադրամիջոցների խոտանման համար պահանջվող տեղական հարկի պարտավորություններ չունենալու մասին տեղեկանքը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 1

«ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 2

«ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեում նախատեսվում է ծախսերի ավելացում՝ գույքահարկ վճարողի փոխարեն բյուջեից վճարումներ կատարելու համար: